«Ես կամավոր եմ» ծրագիր

Կամավորությունը Հայաստանում

Իրավիճակային վերլուծություն



«Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի, և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության No AID-111-LA-10-00001 համագործակցության պայմանագրի DFD-A-00-09-00141-00 պայմանագրի շրջանակներում **Հայ կամավորների միության** միջոցով: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են հեղինակին (հեղինակներին)՝ **Հայ կամավորների միության** պատասխանատվության տակ, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետերի հետ:»

Երևան 2011թ.

Կամավորությունը Հայաստանում
Իրավիճակային վերլուծություն

Ներածություն. Հայաստանում քաղաքացիական հասարակության կայացման հիմնահարցը օրակարգային է շուրջ երկու տասնամյակ: Իրագործվել են և ընթացքի մեջ են քաղաքացիական հասարակության կառույցների զարգացման ծրագրեր, որոնց շրջանակներում փորձագիտական և այլ օժանդակություն է ցուցաբերվում բազմաթիվ ոչ առևտրային կազմակերպությունների, քաղաքացիական խմբերի Երևանում և մարզերում: Այս համատեքստում քաջալերվում է նաև կամավորությունը:

«Ես կամավոր եմ» ծրագիրը կոչված է ընդլայնել կամավորության մշակույթը Հայաստանում, հավատալով, որ այն

- խթանում է քաղաքացիական մասնակցությունը և պատասխանատվությունը,
- նպաստում է համերաշխ և ամուր համայնքների ձևավորմանը:

Ծրագիրը, որի նկարագրությունը ներկայացնում ենք Հավելված 1-ում, իրականացվում է Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան գրասենյակի և ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության աջակցությամբ:

Ծրագրի խնդիրներից ելնելով՝ ձևավորվել է Հայաստանում կամավորությամբ շահագրգիռ անհատների և կառույցների աշխատանքային խումբ, որին, Հայ կամավորների միությունը խորին շնորհակալություն է հայտնում ի շահ Ծրագրի նպատակի ժամանակի և ջանքերի ներդրման համար: Աշխատանքային խմբի կազմը ներկայացնում ենք ստորև.

1. Հովհաննես Ստեփանյան - Տարածաշրջանային ղեկավար, ԱՄՆ խաղաղության կորպուս – Հայաստան,
2. Ստեփան Սհոյան - Համայնքային և բիզնեսի զարգացման ծրագրի ղեկավար, ԱՄՆ խաղաղության կորպուս - Հայաստան,
3. Մարգարիտ Փիլիպոսյան - ՀՕՖ Հայաստանի մասնաճյուղի փոխտնօրեն
4. Մարինե Շիրինյան - անհատ կամավոր,
5. Արփինե Հակոբյան - սոցիոլոգ, «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ,
6. Գոհար Պալյան - Միջոցների զարգացման ղեկավար, Ֆուլեր տնաշինական կենտրոն,
7. Հասմիկ Չախալյան - ծրագրերի ղեկավար, ԵՄՔԱ Հայկական Ազգային Միություն,
8. Արմենուհի Պետրոսյան-Ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն,
9. Արայիկ Միլիտոսյան - անդամ, «Երկիր և մշակույթ» ՀԿ,
10. Արսեն Պապոյան - տնտեսագետ, Դպրոցական ծնողխորհուրդների անդամների ազգային ասոցիացիա,
11. Լիլիթ Հակոբյան – տնօրեն, Շրջանավարտների և կարիերայի կենտրոն, Երևանի պետական համալսարան:

Ի թիվս այլ գործողությունների, **«Ես կամավոր եմ»** ծրագրի ռազմավարություններից մեկը Հայաստանում կամավորության փորձն ուսումնասիրելն էր: Սույն վերլուծության մեջ ի մի են բերվել **«Ես կամավոր եմ»** ծրագրի աշխատանքային խմբի, Երևանի 5 ավագ դպրոցների 30 սաների, ինչպես նաև՝ 15 երիտասարդների և 25 ուսանողների հետ թեմատիկ քննարկումների արդյունքները:

Ներկայացված տվյալները որակական են և որոշ իմաստով արտացոլում են իրավիճակը ողջ Հայաստանում, քանի որ Ծրագրի աշխատանքային խմբի մասնակից կազմակերպությունների մեծ մասը ներկայացված է նաև մարզերում: Կամավորության ներգործության վերհանման նպատակով Ծրագրի աշխատանքային խմբի մասնակցությամբ կազմակերպվել է նաև ֆոկուս-խումբ քննարկում:

Սույն վերլուծության հիմքում ընկած հարցերի շրջանակը և արդյունքները ներկայացնում ենք ստորև.

1. ի՞նչ է կամավորությունը,
2. ո՞վ է կամավորը,
3. ո՞րն է կամավորության նպատակը,
4. կամավորական ընթացիկ գործունեության ուղղությունները Հայաստանում,
5. կամավորական գործունեության արդյունքները Հայաստանում,
6. կամավորական գործունեության միջավայրը Հայաստանում:

Ի՞նչ է կամավորությունը

Կամավորության տարբեր սահմանումներ են շրջանառվում Հայաստանում, որոնք, սակայն, վերապահումով են առ այն, որ կամավորությունն ավելին է քան հնարավոր է բացատրել: Հիմնական միտքն այն է, որ կամավորությունն անհատույց գործունեություն է, որը մարդու ազատ կամքի, բարի կամքի դրսևորումն է՝ ի նպաստ հասարակությանը հուզող հիմնախնդիրների լուծման: Որոշ սահմանումներ անդրադառնում են նաև կամավորի շահին, այսինքն՝ թե ինչ է քաղում անհատը կամավորություն անելով:

«Ես կամավոր եմ» ծրագրի աշխատանքային խումբը, մտքերի գրոհի միջոցով, առաջարկել է կամավորության հետևյալ մեկնաբանությունը.

- Բարեգործության դրսևորման ձև,
- Կամավոր անհատույց աշխատանք,
- Անշահախնդիր հանրօգուտ աշխատանք,
- Բարի կամքը՝ գործողության մեջ,
- Շահերի և բարոյական արժեքների համադրություն,
- Կյանքում բազմազանություն, տարբերություն մտցնելու հնարավորություն,
- Լավ փորձ և գիտելիք ձեռք բերելու լավ հնարավորություն,
- Սեփական ունակությունները մեկ ուրիշի հետ կիսելու հնարավորություն,
- Սեր է կամավորությունը,
- Նվիրում,
- Միջոց ցույց տալու, որ հնարավոր է ինչ-որ բան փոխել,
- Սոցիալական պատասխանատվություն,
- Ստեղծագործական աշխատանքի հնարավորություն,
- Սրտի գործ:

Աշխատանքային խումբը երկարատև քննարկումների միջոցով ի մի է բերել մտքերի գրոհի արդյունքները և առաջարկում է հասկացության հետևյալ բացատրությունը.

Կամավորությունը մարդկանց անհատույց ծառայելն է՝ ինքնակամ և սիրով:

Տվյալ ձևակերպումը ամփոփում է կամավորության անհատական և ինստիտուցիոնալ փորձից բխած նշանակությունը:

Ծրագրին մասնակից ավագ դպրոցների սաներն այսպես են բացատրում կամավորությունը.

- սրտացավություն, հայրենասիրություն,
- չպարտադրված, սրտանց գործունեություն,
- հասարակության համար օգտակար գործ անելու՝ ներսից բխող ցանկություն,
- հումանիտար աշխատանք,
- դրական գործողություն՝ դրական արդյունքի հասնելու նպատակով,
- փոքր գործեր՝ մեծ սրտով,
- ոչ թե շարժում, այլ մտածելակերպ:

Կարծիքները մեծամասամբ համընկնում են առ այն, որ կամավորությունը բարի գործ անելու մասին է՝ հիմնականում թելադրված պատասխանատվությամբ և օգտակար լինելու մղումով:

Ո՞վ է կամավորը

«Կամավոր» հասկացության սահմանումը տրված է ՀՀ բարեգործության մասին օրենքի 9-րդ հոդվածում հետևյալ կերպ. «Կամավորներն այն ֆիզիկական անձինք են, ովքեր սույն օրենքի նպատակներից ելնելով՝ կատարում են անհատույց աշխատանքներ բարեգործություն ստացողների օգտին»:

Ըստ «Ես կամավոր եմ» ծրագրի քննարկումների արդյունքների՝ կամավոր է

- բարի կամքի տեր, գիտակից և գթասիրտ մարդը,
- մարդասերը, բարի գործ կատարողը,
- ակտիվ քաղաքացիական դիրքորոշում ունեցող, կարիքին արձագանքող և պատասխանատու մարդը,
- քրիստոնեական համոզմունքներ ունեցողը,
- բարոյական արժեքների կրողը, առաքինի նախաձեռնություններով հանդես եկողը,
- «սրտի ուղեղով» մտածողը,
- զոհողության, օգնության և անհատույց ծառայելու պատրաստ մարդը:

Եթե փորձենք ամփոփել՝ կամավորը կարիքին արձագանքող և սոցիալապես հանձնառու մարդն է՝ պատրաստ անհատույց ծառայության: Կամ, դպրոցականներից մեկի ձևակերպմամբ, կամավոր լինել՝ նշանակում է հասարակության խնդիրները համարել քոնը:

Ըստ ծրագրի մասնակից ավագ դպրոցների սաների՝ լինել կամավոր՝ նշանակում է լինել

- **Կ**արեկից,
- **Ա**նձնազոհ,
- **Մ**արդասեր,
- **Ա**ջակից,
- **Վ**շտին հասնող,
- **Ո**ղորմած,
- **Ր**ոպեն գնահատող:

Ո՞րն է կամավորության նպատակը

Այս հարցի պատասխանը բացահայտում է կամավորության դրական նշանակությունը թե' հասարակության համար ընդհանուր առմամբ, թե' կատարողի: Ըստ «Ես կամավոր եմ» ծրագրի տվյալների՝ կամավորությունը նպաստում է.

- հասարակության առողջացմանը,
- խղճի հետ հաշտվելուն,
- բարի կամքի դրսևորմանը,
- աղքատության նվազեցմանը,
- աշխարհում խաղաղությանն ու բարեկամությանը,
- հոգևոր/բարոյական արժեքների կենսագործմանը,
- հանրության անդամների փոխադարձ օգնությանը,
- երիտասարդների ինքնաբացահայտմանը և աշխատանքային կողմնորոշմանը,
- մասնագիտական հմտությունների և անձնային որակների ձևավորմանը,
- անհատի կարողությունների ներդրմանը՝ ի նպաստ մեկ ուրիշ կազմակերպության կամ խմբի, որը դրա կարիքն ունի,
- Հայաստանի և այլ երկրների միջև միջմշակութային հաղորդակցությանը:

Հատկանշական է, որ անձնական օգուտի գաղափարը կապված է հիմնականում երիտասարդության հետ, ինչը տարիքային առանձնահատկություն է՝ փաստված նաև միջազգային փորձով: Հասուն տարիքի կամավորներն առավել արժևորում են մարդկանց և հասարակությանը օգտակար լինելու հնարավորությունը: Ըստ Քաունթերփարթ ինթերնեշնլ/Հայաստան գրասենյակի Քաղաքացիական հասարակության ինդեքս նախաձեռնության շրջանակներում կատարված «Կամավորության մշակույթը Հայաստանում» 2010թ*. վերլուծության արդյունքների ՝ կամավորության ամենաուժեղ շարժիչ ուժը Հայաստանում բարեգործությունն է, իսկ ամենամեծ խթանը՝ մյուսներին օգնելու ցանկությունը: Նույն աղբյուրը, որպես կամավորության շարժառիթ է նշում նաև ժամանակն արժևորելը, բավարարվածության զգացումը, պահանջված լինելու գիտակցումը, ինքնավստահության և ինքնագնահատականի բարձրացումը:

Կամավորական ընթացիկ գործունեության ուղղությունները Հայաստանում

Ըստ «Ես կամավոր եմ» ծրագրի տվյալների՝ կամավորական ներուժը Հայաստանում կիրառվում է հիմնականում հետևյալ ուղղություններով.

- մասնակցություն տարբեր միջոցառումների կազմակերպմանը,
- ընդգրկվածություն ոչ առևտրային կազմակերպությունների ծրագրերում, համահայկական միջոցառումներում,
- բարոյական և նյութական աջակցություն անապահով ընտանիքներին, խոցելի խմբերին,
- միջմշակութային ծրագրեր,
- համայնքի և բիզնեսի զարգացում,
- առողջապահական, բնապահպանական, օտար լեզուների ուսուցման կրթական ծրագրեր,
- երիտասարդական, թեմատիկ ճամբարների կազմակերպում,
- ընթացիկ ծրագրային գործունեություն/կազմակերպության վարչարարական աշխատանքներ:

Ծրագրին մասնակից ավագ դպրոցների սաները ներգրավված են կամավորական հետևյալ նախաձեռնություններում.

- օգնություն դպրոցին՝ հարակից տարածքների, այգու բարեկարգում,
- պիտույքների, հագուստի տրամադրում կարիքավոր ընտանիքներին,
- փոխօգնություն դպրոցում,
- աջակցություն մանկատներին, ծերանոցներին, խոցելի խմբերին:

Կամավորական գործունեության արդյունքները Հայաստանում

Կամավորության շնորհիվ դրական փոփոխություն արձանագրելու նպատակով «Ես կամավոր եմ» ծրագրի շրջանակներում քննարկել ենք կամավոր գործունեության արդյունքները և ստացել հետևյալ պատկերը, ինչն առաջարկում ենք որպես օրինակ՝ քաջ գիտակցելով, որ բազմաթիվ այլ կառույցներ և անհատներ կարող են համալրել այս ցանկն իրենց ձեռքբերումներով.

- տներ սոցիալապես անապահով ընտանիքների համար,
- խնամված հիվանդներ,
- գուրգուրված մանուկներ և ծերեր,
- բարեկարգված համայնքներ,
- ամուր քաղաքացիական կառույցներ,
- զարգացած երիտասարդներ՝ հմուտ, ազատամիտ, անկախ, նախաձեռնող,
- համայնքային համախմբվածություն, թիմային աշխատանքի մշակույթ,
- անտարբերության, չեզոքության վերացում. մարդիկ սկսում են մտածել նաև վեհ գաղափարների մասին,
- կամավորության գաղափարը կրողների առկայություն,
- ինքնաիրացված անհատներ:

Ակնհայտ է, որ կամավորության արդյունքները վերաբերում են և' կատարողին, և' հասարակությանը, և' կամավորների ներուժը կիրառող կառույցներին, ինչը փաստում է, որ կամավորությունը նաև փոխադարձաբար շահեկան է, սակայն նախ՝տալու և հետո՝ ստանալու հաջորդականությամբ: Երիտասարդների ձևակերպմամբ՝ այն տալու և վերցնելու երկկողմանի գործընթաց է կամ՝ հաճելիի և օգտակարի համատեղում: Միևնույն ժամանակ, ուսանողների և դպրոցականների պնդմամբ, եսասեր և միայն անձնական շահ հետապնդող մարդիկ հակված չեն կամավորության:

Կամավորական գործունեության միջավայրը Հայաստանում

Կամավորության վերաբերյալ առկա վերլուծությունների արդյունքները հիմնականում անդրադառնում են կամավորության իրավական միջավայրին, ինչի մասին անդրադարձ կլինի նաև այստեղ: Ընդսմին, կներկայացնենք «Ես կամավոր եմ» ծրագրի աշխատանքային խմբի քննարկումների արդյունքում ուրվագծված սոցիալ-մշակութային և ինստիտուցիոնալ գործոնները:

Այսպես.

- Հայաստանում կամավորության մշակույթը նոր է սկսում ձևավորվել:

- Կամավոր գործունեության համար միջավայրը բավականաչափ քաջալերող չէ: Երևանում և մարզերում իրավիճակները տարբեր են. մարզերի համեմատությամբ Երևանում կամավորությունը մի փոքր ավելի ընդունելի է:

- Կամավորության մշակույթը մարզերում այնքան էլ զարգացած չէ: Տպավորությունն այնպիսին է, որ խորհրդային դրոշմը դեռ շարունակում է գոյություն ունենալ, և անհատական պատասխանատվության գաղափարը դեռևս լայն ընդունելություն չունի (խորհրդային շրջանում կենտրոնացված ձևով միջոցներ են հատկացվել համայնքային կարիքների լուծման նպատակով, և այդ ավանդույթի հիշողությունը դեռ գործում է համայնքի բնակիչների շրջանում):

- Մարզերում մարդիկ չունեն սեփականության, տիրոջ զգացում: Չկա ակտիվ քաղաքացիության ինստիտուտ:

- Անկախացումից հետո երիտասարդական շարժումներ են սկսել ձևավորվել, և կամավորությունը նրանց շրջանում ավելի տարածված է:

- Սոցիալ-տնտեսական հոգսերը կլանում են հասուն տարիքի մարդկանց ժամանակի մեծ մասը, և նրանց համար դժվար է կամավորել:

- Քաղաքացիներին բնորոշ է նվազ մասնակցությունը հասարակական կյանքին:

Կամավորության իրավական կարգավորումը. Հայաստանը չի ընդունել օրենք կամավորական գործունեության մասին: Մշակվել է կամավոր աշխատանքի մասին օրենքի երկու նախագիծ, որոնցից մեկը «Պրոֆեսիոնալները հանուն քաղաքացիական հասարակության» ՀԿ-ի կողմից 2004 թվին, մյուսը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ 2008 թվին: Նշված նախագծերը պարունակում են հիմնականում հետևյալ գլուխները.

- Ընդհանուր դրույթներ,
- Կամավոր աշխատանքի սուբյեկտները, նրանց իրավունքները և պարտականությունները,
- Կամավոր աշխատանքի կազմակերպումը,
- Կամավոր աշխատանքների կազմակերպումը օտարերկրյա պետություններում և օտարերկրացի կամավորների աշխատանքը Հայաստանի Հանրապետությունում:

Բացի այդ, 2005 թվականի դեկտեմբերին Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է «Երիտասարդների անդրազգային երկարաժամկետ կամավորական ծառայության խթանման մասին» Եվրոպական կոնվենցիան, որով ստանձնել է կամավորությունը ՀՀ-ում խթանելու և խրախուսելու պարտավորություն:

2002թ.-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության բարեգործության մասին օրենքը», կամավորության խրախուսման նպատակով սահմանում է հետևյալը. «Հայաստանի Հանրապետության Նախագահը շնորհում է հետևյալ կոչումները. ՀՀ պատվավոր կամավոր և ՀՀ տարվա կամավոր» (հոդված 15): Թեև սա անշուշտ

շահագրգռող գործոն է, սակայն, ըստ Քաունթերփարթ ինթերնեշնլ/Հայաստան գրասենյակի «Կամավորության մշակույթը Հայաստանում» 2010թ. վերլուծության արդյունքների՝ «բոլոր հարցվողներն այնուամենայնիվ նշեցին, որ այս պարգևատրումը բավարար չէ պատվելու և, այսպիսով, խթանելու կամավորությունը Հայաստանում»:

Կամավորության կանոնակարգումը կազմակերպություններում. Կամավորական ներուժը հիմնականում կիրառվում է Հայաստանի քաղաքացիական հասարակության կառույցների կողմից: Այդ նպատակով փորձ է արվում կամավորների հետ աշխատանքի ներկազմակերպական ընթացակարգեր կիրառել, որոնք որոշ չափով ֆորմալ և ուղղորդված են դարձնում նրանց գործունեությունը:

Ըստ «Ես կամավոր եմ» ծրագրի աշխատանքային խմբի քննարկման արդյունքների՝ կամավորություն խթանող և կիրառող կազմակերպություններին բնորոշ է կամավորների կառավարման կանոնակարգվածությունը հետևյալ կերպ.

- գործում են կամավորների ներգրավման ընթացակարգեր,
- կամավորներին հավաքագրում են հայտարարության միջոցով՝ որոշակի պարբերականությամբ,
- որոշ կառույցներ ունեն կամավորների պարտականությունների հստակ նկարագրություն, կամավոր գործունեության համար սահմանված ժամկետներ, պոտենցիալ կամավորի համար սահմանված փորձաշրջան, այնուհետեև՝ նրանց ներգրավման որոշակի ժամկետներ,
- կամավորների կառավարումն ունի ընդհանրություններ աշխատակազմի կառավարման հետ:

Կամավորության միջավայրի բաղկացուցիչներն են նաև կամավորության զարգացման նպաստավոր և անբարենպաստ գործոնները: «Ես կամավոր եմ» ծրագրի աշխատանքային խումբը հետևյալ խոչընդոտներն է մատնանշում.

- կամավորների ներուժի սխալ օգտագործման վախը/վտանգը,
- ոչինչ չի խոչընդոտում,
- մարդկանց մտածելակերպը,
- ազգային մտածելակերպը,
- կամավորության գաղափարի թերըմբռնումը,
- ԽՍՀՄ «ժառանգությունը»,
- դպրոցներում այս առնչությամբ դաստիարակության բացակայությունը,
- «կամավոր պարտադիր» կարծրատիպի առկայությունը,
- քաղաքացիական ինքնագիտակցության բացակայությունը,
- սոցիալ-տնտեսական պայմանները,
- համապատասխան օրենքի բացակայությունը,
- կամավորների սխալ կառավարման հետևանքով կամավորության գաղափարի խեղաթյուրումը:

Հասկանալու համար, թե ինչը կնպաստի կամավորության զարգացմանը Հայաստանում, «Ես կամավոր եմ» ծրագրի աշխատանքային խումբը փորձ է արել նկարագրել **կամավորության դասական միջավայրը.**

- Կամավորության պահանջարկը արձանագրված է:

- Կամավորությունը կարևորված է հասարակության մեջ, «կամավոր ես՝ կարևոր ես» սկզբունքով:

- Ձևավորված է կամավորության գաղափարի տարածման քաղաքականություն, հատկապես դպրոցներում:

- Հանրությունը տեղեկացված է կամավորության վերաբերյալ:

- Հասարակությունը կամավորության պատրաստելու նպատակով կիրառվում է կազմակերպված մոտեցում, գործում է կամավորության զարգացման, խթանման վերաբերյալ պետական քաղաքականություն:

- Կամավորության լավ փորձը և օրինակները ներկայացվում են հանրությանը:

- Զարգացած տնտեսությունը նպաստավոր գործոն է կամավորության համար:

- Հասարակությունը գրկաբաց է ընդունում կամավորներին:

- Կամավորությունը ծավալվում է սիրո գաղափարի հիմքով:

- Կամավորները լավ օրինակ են ծառայում հասարակության համար:

- Կամավորության համար ժամանակ հատկացնելը կարևորվում է:

- Կամավորությունը քաջալերվում է ընտանիքներում:

Եզրակացություն

- Կամավորությունը Հայաստանում փաստ է և հիմնականում կրում է ոչ ֆորմալ բնույթ:

- Կամավորական գործունեության հիմնական ուղղություններ են.
    - ներկազմակերպական վարչարարություն,
    - աջակցություն խոցել խմբերին, կարիքավորներին,
    - համայնքների զարգացում,
    - կրթություն, տեղեկատվություն,
    - շրջակա միջավայրի և մշակութային արժեքների պահպանություն:

- Կամավորության հիմնական շարժառիթը մարդկանց և հասարակությանը օգնելու ձգտումն է, բարեգործությունը:
- Կամավորը բնութագրվում է հիմնականում հետևյալ հատկանիշներով. գթասիրտ, սոցիալական պատասխանատվության կրող, անհատույց ծառայելու պատրաստ մարդ:
- Կամավորական ներուժի կիրառումը առավել տարածված է քաղաքացիական հասարակության կառույցներում և Երևանում:
- Կամավոր գործունեության զարգացման հիմնական խոչընդոտներն են քաղաքացիական կրավորականությունը, «կամավոր պարտադիր» կարծրատիպի առկայությունը, սոցիալ-տնտեսական դժվարին պայմանները, իրավական համապատասխան դաշտի անկատարությունը:

Առաջարկներ

- Կատարել կամավորության փորձի համակողմանի ուսումնասիրություն Հայաստանում՝ ժողովրդագրական, տնտեսական, սոցիալ-մշակութային և ինստիտուցիոնալ տեսանկյունից,

- կատարել կամավորական ներուժի կարիքի գնահատում հասարակության բոլոր հատվածներում,

- կատարել կամավորների կառավարման կարողության գնահատում կամավորների ներուժը կիրառող կառույցներում,

- ձևավորել կամավորության նշանակության և նպատակների հստակ ըմբռնում տարիքային և մասնագիտական տարբեր խմբերի շրջանակներում,

- ձևավորել կամավորի բարոյական կոդեքս, որտեղ նկարագրված կլինեն կամավորին և կամավորական գործունեությանն առնչվող հիմնական պահանջները, և որը կունենա կողմնորոշող նշանակություն կամավորության ձգտող անհատի և կամավորահեն կազմակերպությունների համար,

- կատարել կամավորության մասին օրենսդրության կարիքի գնահատում:

*Մանե Թադևոսյան՝ հետազոտող, Լուսինե Հակոբյան՝ ազգային համակարգող, ՔՀԻ իրականացնող ազգային թիմ, Քաունթերփարթ ինթերնեշնլ/Հայաստան, Քաղաքացիական հասարակության ինդեքս նախաձեռնություն, «Կամավորության մշակույթը Հայաստանում» վերլուծություն, Երևան, 2010թ.

Հավելված 1

«Ես կամավոր եմ»

Ծրագրի հայեցակարգ

Կամավորությունը և քաղաքացիական մասնակցությունը պետության կայունության բաղկացուցիչներն են, որոնք կերտում են սեփականության զգացում և ներառում առկա գիտելիքն ու փորձը զարգացման գործընթացներում: Կամավորությունը ուժեղացնում է քաղաքացիներին, քաջալերում է նրանց առավել ընդգրկված լինել իրենց համայնքներում և առավել համախմբված է դարձնում համայնքները:

Ծրագրի նպատակն է՝ նպաստել կամավորության մշակույթի տարածմանը Հայաստանում:

Արժեքները.

- քաղաքացիական մասնակցություն,
- պատասխանատվություն,
- ամուր համայնքներ:

Ծրագրի խնդիրներն են.

1. խթանել կամավորությունը՝ որպես քաղաքացիական մասնակցության ընդլայնման, տեղի համայնքների, Հայաստանի Հանրապետության և Հայաստան–Սփյուռք կապերի ամրապնդման միջոց,

2. խթանել և ավելացնել կամավորության հնարավորությունները ՀՀ տարբեր տարիքի քաղաքացիների և սփյուռքահայերի համար՝ հնարավորինս լայն ընդգրկմամբ,

3. ավելացնել հանրության տեղեկացվածությունը կամավորության շահեկանության վերաբերյալ՝ անհատական, համայնքային և ազգային հարթությունում,

4. խթանել տեղական և իշխանության այլ օղակների ներգրավումը՝ ի աջակցություն կամավորության՝ որպես Հայաստանում կայունության բարենպաստ գործոն:

Ծրագրի ակնկալվող արդյունքներն են.

1. ամուր քաղաքացիական հասարակության համար կամավորության կարևորության և շահեկանության վերաբերյալ առավել իրազեկ քաղաքացիներ,

2. սփյուռքի հայկական կազմակերպությունները առավել իրազեկ են Հայաստանում կամավորության և շահագրգիռ կազմակերպությունների հետ գործընկերության նպատակային հնարավորությունների վերաբերյալ,

3. ՀՀ տարբեր տարիքի քաղաքացիների և սփյուռքահայերի կամավորության նպատակով ընդլայնված հնարավորություններ: